

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ
ԹՎԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԿՐԹԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱԶԱՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՄԱՐԻԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է «Էլեկտրոնային գրագիտության և թվային անվտանգության դպրոց»» ծրագրի շրջանակում, «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի կողմից, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության, Սիդայի աջակցությամբ իրականացվող «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում:



Ուսումնասիրությունում ներկայացված բովանդակությունը կարող է չհամընկնել ծրագրի ֆինանսավորող կողմերի դիրքորոշումների հետ:

Ուսումնասիրության աշխատանքային խումբ՝

Ազատ Մելքոնյան, Էլեկտրոնային գրագիտության և թվային անվտանգության դպրոցի շրջանավարտ,

Մարիամ Պետրոսյան, Էլեկտրոնային գրագիտության և թվային անվտանգության դպրոցի շրջանավարտ:

Գյումրի, 2022

Բովանդակություն

Ներածություն	3
Ուսումնասիրության մեթոդաբանություն	5
Դաշտային աշխատանքի արդյունքներ.....	7
Սեղանային աշխատանքի արդյունքներ.....	11
Եզրակացություն և ամփոփում.....	14
Առաջարկություններ	15

Ներածություն

Ներկայումս ամբողջ աշխարհում էլեկտրոնային համակարգերի ներդրումը կրթական գործընթացի իրականացման համատեքստում չափազանց արագ է զարգանում: Այն իր հերթին պահանջում է կրթական գործընթացի իրականացումը բավարար ռեսուրսների ներդրման միջոցով և համապատասխան մակարդակի իրազեկվածության անհրաժեշտություն թե՛ կրթական գործընթացն իրականացնողի, թե՛ կրթական գործընթացին մասնակցողի կողմից:

Այսօր դժվար է պատկերացնել կյանքն առանց էլեկտրոնային գրագիտության, ինչը ենթադրում է թվային սարքավորումներից ճիշտ օգտվելը, առցանց տիրույթում, էլեկտրոնային հաղորդակցման գործընթացում համապատասխան գործիքների և ընդունված մոտեցումների կիրառումը և այլն:

Ստորև մեջբերված է հատված Բոլորը հանուն հավասար իրավունքների հիմնադրամի կողմից իրականացրած «Էլեկտրոնային գրագիտության և թվային անվտանգության դպրոց» ծրագրի շրջանակում ստեղծված «Էլեկտրոնային գրագիտություն և թվային անվտանգություն» ձեռնարկից.

«Բ»-ն է էլեկտրոնային գրագիտությունը

Էլեկտրոնային գրագիտությունը համակարգչով, սմարթֆոնով կամ տեխնիկական այլ միջոցով առցանց միջավայրում գործունեություն իրականացնելու առավել արդյունավետ և ընդունելի մեթոդների կիրառմամբ լավագույն արդյունքի հասնելու ճանապարհն է: Այլ կերպ ասած, էլեկտրոնային գրագիտությունը համակարգչային միջնորդավորված եւ ինտերնետային միջավայրերում գրագետ եւ վստահորեն հաղորդակցվելու, անվտանգ կարդալու, գրելու, ստեղծելու, ստեղծագործելու եւ հետազոտություններ իրականացնելու ունակություն է:

Բնչո՞ւ է մեզ պետք էլ. գրագիտությունը

Էլեկտրոնային գրագիտությունը թույլ է տալիս մեզ ճիշտ և արդյունավետ կիրառել տեխնոլոգիաները, դրանք օգտագործել ցանցային հաղորդակցության, արտադրանքներ ստեղծելու գործընթացում՝ որպես հիմնական և անփոխարինելի գործիքներ, ավանդական հաղորդակցության տարբերակները փոխարինել ժամանակակից մեթոդներով, որոնք այլ կերպ ասած թույլ են տալիս անցնել ժամանակով և տարածությունով, խնայել ժամանակ, միջոցներ և ռեսուրսներ, ընդլայնել գործունեության և ազդեցության շրջանակը:

Էլեկտրոնային գրագիտությունը մերօրյա՝ տեղեկատվական հասարակությունում թույլ է տալիս գրավել առաջնային դիրքեր, քանի որ այն ընձեռում է բազմաթիվ առավելություններ, ինչպես անհատական և անձնական գործունեությունում, այնպես էլ

աշխատանքային շուկայում և առավել լայն շրջանակում, քան անձնական և աշխատանքային գործունեություններն են:

Որո՞նք են էլեկտրոնային գրագիտության հիմնական առավելությունները և ո՞րն է դրանց շնորհը

Էլեկտրոնային գրագիտությունը մերօրյա միջավայրում անփոխարինելի կարողությունների ամբողջություն է և տեղեկատվական հասարակությունում ուրույն տեղ զբաղեցնելու միջոց:

Կան հիմնական պատճառներ, որոնք միանշանակ առավելություն և առանձնահատկություն են տալիս էլեկտրոնային գրագիտությանը.

- մենք գնում ենք դեպի գիտելիքահեն տնտեսություն, որն ամենուրեք օգտագործում է էլեկտրոնային գործիքներ,
- կրթությունն այլևս գտել է իր ժամանակակից հունը՝ էլեկտրոնային եղանակով կապելով և՛ սվորողին, և՛ սովորեցնողին, և՛ սովորեցնելու միջոցներն ու գործիքները, և՛ բովանդակությունը՝ ստեղծելով ահռելի և անսպառ հնարավորությունների հսկայական տիրույթ,
- տանը, դպրոցում, համալսարանում, աշխատավայրում, տնտեսության բոլոր ոլորտներում, գիտության, բժշկության, անգամ բնության մեջ՝ ամենուր պահանջվում են ունիվերսալ էլեկտրոնային հմտություններ,
- այն հեշտացնում է մեր աշխատանքը, հնարավորություն է տալիս որոնել առցանց տվյալներ, կապ պահել ընկերների հետ, հաղորդակցվել լայն հասարակության հետ, ստեղծել սեփական բովանդակությունը, հետեւել մյուսների, այդ թվում նաև՝ զանգվածային լրատվության միջոցների և մեդիաների բովանդակությանը»:

Ինչպես գիտենք՝ 2020 թվականի մարտից, պայմանավորված նոր կորոնավիրուսային համավարակով, ուսումնական հաստատություններն անցան կրթական գործընթացի իրականացման առցանց ռեժիմի: Կարելի էր ասել, որ ուսուցչադասախոսական կազմը սովոր լինելով հին դասավանդման մեթոդաբանությանը՝ պարտաստ չէր նոր տեխնոլոգիաներին ու գործիքներին, որոնք մարտահրավեր էին շատերի համար:

Այն բացասական կարծիքը, որ հասարակությունը ժամանակի ընթացքում ձևավորել էր առցանց կրթության հանդեպ, գալիս էր թվային գործիքներին չտիրապետելուց: Իհարկե, չենք բացառում, որ լսարանային կրթությունը ավելի արդյունավետ է: Սակայն այն արդյունավետ է այն հանգամանքով, որ մենք առավել լավ գիտենք՝ ինչպես վարվել այդ միջավայրում, այն կարծես ավելի հարազատ լինի: Իրականում՝ նույնը առցանցում է:

Իսկ թե որքանով է էլեկտրոնային գրագիտությունը նշանակալի կրթական հաստատություններում, անդրադարձել ենք սույն ուսումնասիրությունում՝ հետազոտելով Շիրակի մարզի համատեքստը:

Ուսումնասիրության մեթոդաբանություն

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է «Էլեկտրոնային գրագիտության և թվային անվտանգության դպրոց» ծրագրի շրջանակում: Ուսումնասիրությունն իրականացվել է Շիրակի մարզում, այն չի համարվում ներկայացուցչական և ենթադրում է դպրոցի շրջանավարտների կողմից կատարած փոքրիկ աշխատանք՝ ոլորտի և թեմայի առնչությամբ երիտասարդների շրջանում գիտելիքների ու փորձի դիտարկման նպատակով:

Շրջանավարտների կողմից ուսումնասիրության իրականացման համար հիմք է հանդիսացել Էլեկտրոնային գրագիտության և թվային անվտանգության դպրոցի ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու փորձը թվային անվտանգության վերաբերյալ:


Ուսումնասիրության իրականացման համար կիրառվել է առցանց հարցումների մեթոդը՝ Google Forms թվային գործիքի օգնությամբ:

Հարցման առցանց թերթիկի պատրաստման գործընթացում հաշվի է առնվել հարցաթերթի կարճ ծավալը և բովանդակային պատասխան ակնկալող հարցերի նվազագույն ծավալի տեքստ պահանջելու հանգամանքը: Հարցաթերթը պատրաստելիս հաշվի է առնվել սոցիոլոգիական մի քանի կարևոր բաղադրիչներ, որոնք մշտապես կիրառվում են հետազոտություններում՝

- յուրաքանչյուր պատասխանող իրավունք ունի հարցերին պատասխանել անանուն,
- յուրաքանչյուր պատասխանող իրավունք ունի չպատասխանել ցանկացած հարցի,
- յուրաքանչյուր հարց, բացի բուն հարցին վերաբերող տարբերակներից ունեցել է նաև հետևյալ տարբերակները՝
 - Այլ,
 - Չգիտեմ,
 - Դժվարանում եմ պատասխանել,
 - Հրաժարվում եմ պատասխանել:

Հարցմանը մասնակցել է 78 հոգի, որոնցից 46.2%-ը Բուհ-երի ուսանողներ են, 32.1%-ը՝ ավագ դպրոցի աշակերտներ, 14.1%-ը՝ հիմնական դպրոցի աշակերտներ, 6.4%-ը՝ քոլեջի ուսանողներ, իսկ 1.3%-ը՝ ուսումնարանի ուսանողներ:

Ստորև ներկայացված է հարցման մասնակիցների ուսումնական հաստատությունների գրաֆիկական պատկերը:



Ուսումնասիրությունն իրականացվել է նաև սեղանային աշխատանքի մեթոդով, որի ընթացքում դիտարկվել են տեղական և միջազգային մի շարք փաստաթղթեր, զեկույցներ և գիտահանրամատչելի գրականություն: Փաստաթղթերի ընտրության հարցում հիմք է վերցվել աշխարհի լավագույն փորձը:


Դաշտային աշխատանքի արդյունքներ

Հարցման նպատակն էր՝ պարզել, թե դպրոցականները և ուսանողները թվային ինչ գործիքներ են կիրառում, կրթական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար:

Հարց - արդյո՞ք ուսումնական հաստատությունում էլեկտրոնային գրագիտությանը անդրադարձ կատարվել է, եթե այո, ապա խնդրում ենք ներկայացնել, թե ի՞նչ բնույթի է եղել անդրադարձը:


Հարցման մասնակիցների 58%-ը նշել է, որ իրենց ուսումնական հաստատությունում կրթական գործընթացը չի ուղեկցվել թվային գործիքների կիրառմամբ, հետևաբար, նաև չկա պատասխան, թե ինչ գործիքներ կարող էին կիրառվել: Հարցման մասնակիցների միայն 33%-ն է պատասխանել, որ իրենք ուսումնասիրել են էլեկտրոնային գրագիտության որոշ հիմնահարցեր և կրթական գործընթացում կիրառել են թվային գործիքներ, մինչդեռ հարցվողների 9%-ը նշել է, որ չգիտի:

Ընդ որում, որպես թվային գործիքների կիրառման և էլեկտրոնային գրագիտության թեմայի անդրադարձ նշվում է ինֆորմատիկա առարկան, մինչդեռ հանրակրթական և բուհական համակարգերում ինֆորմատիկայի ուսուցումն ընթանում է նույն տրամաբանությամբ, ինչ 5 տարի առաջ:




Հարց – Թվարկված թվային գործիքներից որո՞նք են ձեզ ծանոթ: Կարող եք ավելացնել նաև ձեր տարրերակը:

Հարցվածների մեծ մասը որպես թվային գործիք նշել է Google-ի մի շարք ծառայություններ ինչպիսիք են Goole Docs-ը Google Slides-ը, Google Meet-ը, Google Clasroom-ը: Բացառություն չի կազմել նաև թեստային տարրերակով և ինտերակտիվ եղանակով կրթական գործընթացի և ժամանցի կազմակերպման համար նախատեսված Quizizz և Kahoot հարթակները, ինչպես նաև դիզայնի և թվային պաստառների պատրաստման համար նախատեսված Canva հարթակը:



Հարց – երբե՞ օգտագործե՞լ էք ձեր կողմից նշված թվային գործիքները:

Հարցման մասնակիցների միայն 37.2%-ն է նշել, որ այժմ օգտագործում է այս գործիքները, 55%-ը նշել է, որ երբևէ օգտագործել է թվարկված գործիքները և միայն 7.7%-ն է նշել, որ պարզապես տիրապետում է այդ գործիքներին:



Հարց – կա՞ն գործիքներ որոնք օգտագործում եք կրթական գործընթացում: Եթե այո, ապա նշե՞ք՝ որը:


Հարցվողների հիմնական մասը որպես կրթական գործընթացում կիրառված գործիք նշել է Google-ի մի շարք ծառայություններ, Zoom և Canva հարթակները: Հասկանալիորեն այս գործիքների կիրառման որպես հիմնական պատճառ նշվել է նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված հեռավար եղանակով իրականացվող կրթական գործընթացը և դրա մարտահրավերները:

Հարկ է նշել, որ հարցվողների հիմնական մասն արձանագրել է, որ այս գործիքները հիմնականում կիրառել են կրթական գործընթացից դուրս՝ այլ բնագավառում, սակայն դրանց իմացությունն իրենց աջակցել է հեռավար եղանակով իրականացվող կրթական գործընթացում:

Հարց – Կցանկանա՞ք, որ կրթական գործընթացում ներդրվեն բազում թվային գործիքներ և գործընթացը տեղի ունենա դրանց ակտիվ ներգրավմամբ:

Տրված հարցին հարցվողների 100%-ը տվել է միանշանակ պատասխան՝ ընդգծելով, որ թվային գործիքների ներդրումը կրթական գործընթացում միայն դրական կողմ ունի և

կարող է արդյունավետ ազդեցություն ունենալ, ի տարբերություն առկա և նախկին փորձի, որտեղ թվային գործիքներն իրենց տեղն ու դերը չեն ունեցել ոլորտում:



Մեղանային աշխատանքի արդյունքներ

Թվային անվտանգության դերը մեր կյանքում.

21-րդ դարում գրեթե անհնար է պատկերացնել կյանքն առանց համացանցի: Սմարթֆոնները, համակարգիչները և մնացած տեխնիկական միջոցները, որոնք կապ ունեն համացանցի և թվային աշխարհի հետ, մեր առօրյայի անբաժան մասն են դարձել:

Հասարակությունն անդադար ստանում, ուղարկում, փնտրում է միլիոնավոր և նույնիսկ միլիարդավոր քանակի ինֆորմացիա: Այլ կերպ ասած, մեր իրականությունը, որում մենք ապրում ենք արդեն իսկ հիմնված է ինֆորմացիայի, տեխնոլոգիաների և էլեկտրոնային աշխարհի վրա:

Առաջ քաշենք այն հարցը, թե հաղորդակցվելու, ինֆորմիացիա փնտրելու, մեղիայի և տեխնոլոգիաների հետ առնչվելիս կամ թվային աշխարհում այլ գործողություններ կատարելու համար ինչքան ժամանակ ենք ծախսում:

Ընդհանուր առմամբ դրանք մենք մեր օրվա զգալի մասը ծախսում ենք թվային աշխարհում: Կախված նրանից, թե ինչ նպատակով ենք մենք մեր օրվա մեծ մասը զբաղեցնում թվային աշխարհում, արդյունքը տարբեր է և այն նշանակալի է, երբ մենք տիրապետում ենք էլեկտրոնային գործիքներին և թվային աշխարհի «խաղի կանոններին»:

Ամերիկյան գրադարանային ասոցիացիան¹ սահմանում է թվային գրագիտությունը որպես «տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ օգտագործելու կարողություն՝ փնտրելու, գնահատելու, ստեղծելու և հաղորդելու համար, որը պահանջում է ինչպես ճանաչողական, այնպես էլ տեխնիկական հմտություններ»:

Որպես սահմանում կիրառվում է նաև հետևյալը. թվային (էլեկտրոնային) գրագիտությունը²՝ ինտերնետային միջավայրերում գրագետ եւ վստահորեն հաղորդակցվելու անվտանգ կարգալու, գրելու, ստեղծելու, ստեղծագործելու եւ հետազոտություններ իրականացնելու ունակություն է:

Ինչպես գրագիտության այլ ընդլայնվող սահմանումները, որոնք ճանաչում են իմաստ տալու մշակութային և պատմական ձևերը, թվային գրագիտությունը չի փոխարինում գրագիտության ավանդական ձևերին, այլ փոխարենը զարգացնում և ընդլայնում է գրագիտության ավանդական ձևերի հիմքում ընկած հմտությունները: Թվային գրագիտությունը պետք է դիտվի որպես գիտելիք տանող ճանապարհի մի մաս:

¹ American Library Association - <https://www.ala.org/>

² Wikipedia.org -

https://ru.wikipedia.org/wiki/%D0%A6%D0%B8%D1%84%D1%80%D0%BE%D0%B2%D0%B0%D1%8F_%D0%B3%D1%80%D0%B0%D0%BC%D0%BE%D1%82%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C

Այն հաճախ քննարկվում է մինչ մեղիա գրագիտության համատեքստում: Մեղիագրագիտության ուսուցումը սկսվել է Միացյալ Թագավորությունում և ԱՄՆ-ում՝ 1930-ական թվականներին պատերազմի քարոզչության և 1960-ական թվականներին համապատասխանաբար գովազդի աճի արդյունքում:

Մանկավարժները սկսել են խթանել մեղիագրագիտության կրթությունը, որպեսզի մարդկանց սովորեցնեն դատել և գնահատել իրենց ստացած մեղիա հաղորդագրությունները: Թվային և մեղիա բովանդակությունը քննադատելու ունակությունը մարդկանց հնարավորություն է տալիս բացահայտել կողմնակալությունները և ինքնուրույն գնահատել հաղորդագրությունները:

Որպեսզի մարդիկ ճիշտ գնահատեն թվային և մեղիա հաղորդագրությունները, նրանք պետք է ցուցադրեն թվային և մեղիա գրագիտություն:

Մեղիափորձագետների կողմից անկցացված հետազոտությունները ցույց են տվել, որ ԱՄՆ-ում յուրաքանչյուր քաղաքապետի ծախսում է օրական 721 րոպե թվային աշխարհում:

Էլեկտրոնային գրագիտության առավելությունները աշակերտների համար զանազան են: Այն օգնում է նրանց լինել ավելի պատասխանատու՝ թվային աշխարհում դրսևորել էլեկտրոնային գրագիտություն և քննադատաբար մոտենալ մի շարք հարցերի, ինչպես բովանդակության սպառման, այնպես էլ ստեղծման տեսանկյունից:

Բերենք թվային գրագիտության օրինակներ³՝

- Առցանց ռեսուրսների գնահատում տեղեկատվության ճշգրտության/վստահելիության համար:
- Օնլայն դասերի օգտագործումը կրթական գործընթացում ուսուցումը բարելավելու համար:
- Խրախուսել ուսանողներին՝ օգտագործել տեխնոլոգիաներ իրենց ուսումը ցուցադրելու, վերարտադրելու և փորձը փոխանակելու համար:
- Օգտագործելով համացանցը (վեբ կայքեր, կրթական գործընթացը խթանող հարթակներ, կրթական տեսանյութեր, երաժշտություն և այլն)՝ ուսանողների ուսումնառությունը բարելավելու համար:

Օրինակներ՝ որոնք չեն առնչվում թվային գրագիտության հետ՝

- Պարզապես սովորել, թե ինչպես օգտագործել մուլտիմեդիան կոնկրետ թեմա հետազոտելու և հետաքննելու համար:
- Դպրոցում ունենալ համակարգչային լաբորատորիա:

³ Purposeful Technology - <http://purposefultechology.weebly.com/creating-digital-citizens---what-is-digital-literacy.html>

- Ուսումնասիրություններ իրականացնել (հետազոտություն, կարծիք կամ պատմություններ) համակարգչով կամ կիրառել որոնման համակարգերը միայն տեղեկատվություն գտնելու համար:
- Առցանց լրատվամիջոցների սպառում՝ առանց որևէ գիտելիքի կամ ուղեցույցի, թե ինչպես կարելի է դատել՝ արդյոք տեղեկատվությունը ճշգրիտ է կամ վստահելի:

Այժմ անդրադառնանք ավանդական գրագիտության և թվային գրագիտության միջև եղած տարբերություններին⁴:

Երբ մտածում ենք ավանդական գրագիտության մասին, առաջնահերթ մտաբերում ենք կարդալու և գրելու կարողությունը: Այսօր աշակերտներին պետք է ավելին, քան գրավոր խոսքը տարրական դպրոցում, ավագ դպրոցում և շարունակական կրթություն ստանալու համար: Թվային գրագիտությունն ընդլայնում է ավանդական գրագիտության շրջանակը: Այն ներառում է էլեկտրոնային ուսուցման հմտություններ, որոնք ներառում են աուդիո և վիդեո կրթական նյութեր և առավել արդյունավետ են ամրապնդում սովորողի մտազործունեությունը:

Թվային աշխարհը մեզ բերել է մի մակարդակի, որտեղ շարունակական կրթությունը (ցկյանս կամ life long learning) մեր առօրյալի անբաժան մասն է և պետք է դառնա կրթական գործընթացի իրականացման մեթոդաբանության մաս: Մենք չենք կարող այսօր սովորել մի բան և դա կիրառել ամբողջ կյանքում, որովհետև աշխարհը որում ապրում ենք գտնվում է անվերջ և արագ փոխակերպումների մեջ: Աշխարհը, որտեղ մենք ապրում ենք այլևս նաև թվային է և ակնկալում է սովորողից ինտենսիվ մասնակցություն էլեկտրոնային աշխարհի ամենատարբեր ուղղություններում, որի բանալին էլեկտրոնային գրագիտությունն է:

Թվային և ավանդական գրագիտությունը համատեղելիս⁵ ուսանողները ոչ միայն սովորում են գրել և կարդալ, այլ նաև սովորում են ընդլայնել իրենց հաղորդակցման, լեզվի և մեդիաաշխարհի հմտությունները: Նրանք զարգանում և միաժամանակ վերարտադրում են աշխարհը պատկերների, դիագրամների, աուդիո և վիդեո նյութերի, լրատվամիջոցների միջոցով՝ բարձրացնելով իրենց կարդալու և գրելու հմտությունները ուսուցման ավելի բարձր մակարդակի վրա: Նրանք նաև զարգացնում են դինամիկ ստեղծագործականություն, որն օգնում է նրանց առավել լայն մտածել, հաղորդակցվել, ձևավորել և ներգրավվել իրենց շրջապատող աշխարհում:

Այսպիսով՝ էլեկտրոնային գրագիտությունը միայն կբարելավի կրթական որակը և մեր կյանքը կդարձնի ավելի հեշտ ու հարմար, իսկ զանազան գործիքների կիրառումը կնպաստի մեր գիտելիքների պաշարի ավելացմանը:

⁴ Education Corner - <https://www.educationcorner.com/importance-digital-literacy-k-12.html>
⁵ Common Sense Media - <https://www.commonsensemedia.org/news-and-media-literacy/what-is-media-literacy-and-why-is-it-important?fbclid=IwAR2MlTv-S6R4eB519oAKEodGugv82JF5TVeFa1RLzFZ-s1gk8wf7PtmLqhE>

Եզրակացություն և ամփոփում

Ամփոփելով արդյունքները, կարող ենք նշել, որ էլեկտրոնային գրագիտությունը դեռ իր ուրույն տեղը չի զբաղեցրել կրթական գործընթացում: Թե՛ տարրական, թե՛ հիմնական և ավագ դպրոցներում, թե՛ բուհական համակարգում բավարար ուշադրություն չի դարձվում թվային գրագիտությանն ու թվային գործիքների կիրառմանը: Այն որպես աշխարհում զարգացող ուղղություն պետք է ներդրված լինի Հայաստանի կրթության զարգացման պլանի և ռազմավարական փաստաթղթերի հիմքում:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երիտասարդները մեծամասամբ չեն տիրապետում էլեկտրոնային գրագիտության կանոններին և կրթական գործընթացում չեն կիրառում թվային գործիքներ: Երիտասարդների շրջանում թվային գործիքների կիրառումը պայմանավորված է միայն վերջինների անհատական հետաքրքրություններով և դուրս է կրթական նպատակներով դրանց կիրառման հորիզոնից:

Տեխնոլոգիաները գնալով զարգանում են, յուրաքանչյուր ուսումնական տարվա մեկնարկին աշխարհի առաջատար համալսարանները նոր գործիքներ ու մեթոդներ են ներդնում ինչպես առցանց, այնպես էլ լսարանային կրթության որակը թվային գործիքների միջոցով խթանելու համար:

Այժմ Հայաստանի մարտահրավերն է կառուցվածքային մակարդակում գտնել լուծումներ, կայացնել որոշումներ և դրանք կյանքի կոչել՝ խթանելով թվային կրթությանն ու երիտասարդների շրջանում էլեկտրոնային գրագիտությանը:

Առաջարկություններ

Ուսումնասիրել թվային կրթության ոլորտում աշխարհի առաջատար երկրների փորձը:

Դիտարկել կրթական գործընթացում թվային գործիքների ներդրման հաջողված փորձը: Փորձի ուսումնասիրության արդյունքում իրականացնել Հայաստանում և տարածաշրջանում դրանց ադապտացման և կիրառման հնարավորություններն ու տեսլականը: Մշակել փորձի փոխանակման մեթոդաբանությունն ու կատարել ներդրումներ այն Հայաստանում իրագործելու նպատակով:

Ազգային մակարդակում մշակել ռազմավարական փաստաթղթեր, որոնք կսահմանեն էլեկտրոնային գրագիտության անհրաժեշտությունը և կրթական գործընթացում թվային գործիքների կիրառման կարևորությունը:

Պարբերաբար և ինտենսիվ կերպով վերապատրաստել մանկավարժներին՝ էլեկտրոնային գրագիտության և կրթական գործընթացում թվային գործիքների կիրառման համատեքստում:

Բարելավել կրթական միջավայրը և մշակույթը՝ ներդնելով էլեկտրոնային գրագիտության խթանմանն ու կրթական գործընթացում թվային գործիքների կիրառմանն ուղղված բովանդակային, տեխնիկական, մարդկային և ֆինանսատնտեսական ռեսուրսներ:

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է «Էլեկտրոնային գրագիտության և թվային անվտանգության դպրոց»» ծրագրի շրջանակում, «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի կողմից, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության, Միդայի աջակցությամբ իրականացվող «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում:



Ուսումնասիրությունում ներկայացված բովանդակությունը կարող է չհամընկնել ծրագրի ֆինանսավորող կողմերի դիրքորոշումների հետ:

Ուսումնասիրության աշխատանքային խումբ՝

Ազատ Մելքոնյան, Էլեկտրոնային գրագիտության և թվային անվտանգության դպրոցի շրջանավարտ,

Մարիամ Պետրոսյան, Էլեկտրոնային գրագիտության և թվային անվտանգության դպրոցի շրջանավարտ:

Գյումրի, 2022